

<p>“Ecolur” Informational NGO Address: 49/2 Hanrapetutyun, Yerevan, Armenia E-mail: ecolurpressclub@gmail.com Web site: www.ecolur.org Tel. (37491) 92 12 64 mob.</p>		<p>«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ Հասցե՝ Հանրապետության 49/2, Երևան, Հայաստան Էլ. հասցե՝ ecolurpressclub@gmail.com Էլ. կայք՝ www.ecolur.org Բջջ.՝ (+37491) 92 12 64</p>
---	--	--

ՀՀ Արմավիրի մարզպետ պարոն Էդվարդ Հովհաննիսյանին

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի N 2328-Ն «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության (հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան)» որոշմամբ հաստատված 1-ին հավելված 9-րդ կետում ամրագրված է, որ բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (ՆՊՄԻ) և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման (ՇՊՄՊ) գոտիներում գտնվող բնակավայրերի բնակչությանը բաշխվում են նախօրոք և պահպանվում նրանց մոտ: Նույն հավելվածի 29-րդ կետում նշված է, որ ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների բնակչությանն անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմակերպում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Արմավիրի մարզպետարանները, որոնք անհրաժեշտ քանակությամբ անհատական պաշտպանության միջոցներն ստանում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունից՝ ըստ ներկայացված հայտի:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տալ տեղեկատվություն հետևյալի մասին՝

1. Վերջին անգամ ե՞րբ է մարզպետարանը ՀԱԷԿ-ի ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների բնակչությանը բաշխել որոշմամբ պահանջվող հակազգազեր և դնչկալներ
2. Բաշխված անհատական պաշտպանական միջոցների քանակությունը համապատասխանո՞ւմ է Պլանով նախատեսված քանակություններին:
3. Որքա՞ն են բաշխված հակազգազերի և դնչկալների պիտանելիության ժամկետները:

Հարգանքով՝

Ինգա Զարաֆյան՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ,
կենսաբանական գիտությունների թեկնածու



16.09.2022թ.